# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

**Քաղ. Երևան** **«01» փետրվարի 2016թ.**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Լիանա Աբովյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 08 բաժնի 03 խմբի 02 դասի ծրագրի գծով թարգմանչական ծառայությունների համար հաստատված հատկացումները, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է թարգմանչական աշխատանքների իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ 217499400 (երկու հարյուր տասնյոթ միլիոն չորս հարյուր իննսունինը հազար չորս հարյուր) դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը ներառում է աշխատանքների իրականացման շրջանակներում 2016 թվականի պահպանման ծախսերը հոգալու համար անհրաժեշտ գումարը: Աշխատանքների իրականացման շրջանակներում ծախսերը կատարվում են ըստ սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված նախահաշվի:

1.3.Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում աշխատանքների կատարումը, կամ աշխատանքների իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է թարգմանչական աշխատանքների իրականացման ժամկետները (դրանք նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված աշխատանքները չեն համապատասխանում սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ աշխատանքների ի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Ստանալ թարգմանաչական աշխատանքների իրականացման համար նախատեսված վճար.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. անհրաժեշտության դեպքում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. իրականացված աշխատանքների մասին ներկայացված ամփոփ հաշվետվության վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն կատարված աշխատանքը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը, այլապես այն համարվում է ընդունված:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառում՝ օրենքով սահմանված կարգով.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել կազմակերպության կանոնադրությամբ և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. պետական մարմին ներկայացնել աշխատանքների իրականացման վերաբերյալ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել աշխատանքների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին աշխատանքների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

## 3. Վճարման կարգը և ժամկետները

3.1. Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է կազմակերպությանը՝ եռամսյակային համամասնություններին համապատասխան, ամսական կտրվածով:

## 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## 5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

5.2. Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է սույն թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

## 6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| | |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ |
| Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41 ա | Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41 ա |
| h/h 900011194223 | h/h 217002207462001 |
| Կենտրոնական գանձապետարան | Էյչ-Էս-Բի-Սի Բանկ |
| ՀՎՀՀ 02506264 | ՀՎՀՀ 01242245 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| **Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Գևորգյան** | **Տնօրեն՝ Լ. Աբովյան** |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 1
2016թ. փետրվարի 1-ին
կնքված N 1 պայմանագրի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ «ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| NN Ը/Կ | Իրականացվելիք միջոցառումը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Համառոտ բովանդակությունը | Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | Վերջնա-ժամկետը | Պահանջվող գումարը (դրամ) |
| 1. | Թարգմանչա-կան աշխա-տանքներ | ՀՀ, ՄՄ և ԵՄ իրավական ակտերի, ՀՀ ազգային զեկույցների, ինչպես նաև ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի կամ լիազոր մարմնի ղեկավարի հանձնարարությամբ նաև այլ առանցքային փաստաթղթերի թարգմանությունների իրականացում համապատասխանաբար հայերենից անգլերեն, անգլերենից հայերեն, հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն | Կանոնադրությամբ նախատեսված փաստաթղթերի թարգմանություն, ըստ անհրաժեշտության իրավական վերանայում, խմբագրում/սրբագրում և համապատասխան փաստաթղթերի թարգմանությունների տեղադրում ինտերնետային կայքում | 25588 էջ թարգմանություն | 2016 թվականի դեկտեմբերի 30 | 217499400 |

**Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն**

**Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41 ա**
**հ/հ 900011194223**
**Կենտրոնական գանձապետարան**
**ՀՎՀՀ 02506264**

(ստորագրություն)

**Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Գևորգյան**

Կ.Տ.

**«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ**

**Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41 ա**
**հ/հ 217002207462001**
**Էյչ-Էս-Բի-Սի Բանկ**
**ՀՎՀՀ 01242245**

(ստորագրություն)

**Տնօրեն՝ Լ. Աբովյան**

Կ.Տ.

Հավելված 2
2016թ. փետրվարի 1-ին
կնքված N 1 պայմանագրի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ «ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

| | Անվանումը | Սույն նախահաշ-վով հաստատվող ցուցանիշներ /հազ. դրամ/ | Այդ թվում ըստ եռամսյակների /աճողական/ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | I | II | III | IV |
| | Պետական բյուջեից ֆինանսավորում, ընդամենը. այդ թվում՝ | 217499,4 | 36593,7 | 90881,2 | 145168,6 | 217499,4 |
| 1. | Աշխատանքի վարձատրություն | 214080,0 | 35098,7 | 88868,2 | 142447,6 | 214080,0 |
| 2. | Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | 15,0 | 3,0 | 6,0 | 9,0 | 15,0 |
| 3. | Էներգետիկ ծառայություններ | 1748,4 | 400,0 | 800,0 | 1250,0 | 1748,4 |
| 4. | Կապի ծառայություններ | 450,0 | 85,0 | 200,0 | 325,0 | 450,0 |
| 5. | Գրասենյակային նյութեր | 300,0 | 300,0 | 300,0 | 300,0 | 300,0 |
| 6. | Տրասնպորտային նյութեր | 451,0 | 451,0 | 451,0 | 451,0 | 451,0 |
| 7. | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 256,0 | 256,0 | 256,0 | 256,0 | 256,0 |
| 8. | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 119,0 | | | 50,0 | 119,0 |
| 9. | Ապահովագրական ծախսեր | 50,0 | | | 50,0 | 50,0 |
| 10. | Այլ ծախսեր | 30,0 | | 18260800 | 30,0 | 30,0 |

18095800 24110270

**Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն**

**Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41 ա**
**h/h 900011194223**
**Կենտրոնական գանձապետարան**
**ՀՎՀՀ 02506264**

(ստորագրություն)

**Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Գևորգյան**

Կ.Տ.

**«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ**

**Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41 ա**
**h/h 217002207462001**
**Էյչ-Էս-Բի-Սի Բանկ**
**ՀՎՀՀ 01242245**

(ստորագրություն)

**Տնօրեն՝ Լ. Աբովյան**

Կ.Տ.